

ազգին մէջ, քանի որ իրեն նախնական խանձարուրդը եղած է արեւելքի բեղուն երկնակամարը, և որ վերջը զարգացած՝ Նիւտոնի, Բէյքէյնի, Դիկո-Պրանէի, Կուպեռ-Նիկոսի և այլ հանճարեղ ուսումնականաց գիւտերով և մանր հետազոտութեամբ:

Յօրինողը՝ մանրամասն կը նկարագրէ գիտատրաց երևոյթը, իրենց ձեւը, տար-բարանական կազմութիւնը, և ապա կ'անց-նի Հալլէի գիտաւորին վրայ, որ իրեն նախորդ երևումներէն աւելի, այս տա-րուան շրջանին մէջ մեծ ազմուկ հանեց, քանի որ աստղաբաշխները յայտարարե-ցին թէ երկիրս գէսին մէջէն պիտի անցնի:

Գրեթէ յօրինողը շատ համառօտ կը խօսի Հալլէի վրայ, միայն կը բաւականանայ փրանսացի աստղաբաշխ Պ. Պետրէի խօս-քերը մէջ բերելով՝ որ կ'ապահովեց-նէ թէ ամենեւին մարդկութեան փնաս մը պիտի չպատահի. թէպէտ գրեթէ հեղինա-կէն կը պահանջուէր որ աւելի գիտնակա-նորէն և մանրամասն խօսէր պարբերական գիտաւորաց վրայ, ընդ որս և Հալլէին, որ լրագրաց մէջ օրուան խնդիր մը դարձաւ:

Որչափ որ յօրինողը ամէն ջանս ի գործ դրած է, կը գտնուի ևս փոքր անկատա-րութիւններ, այսու հանգերձ քանի որ մեր ազգին մէջ՝ սոյն օրինակ հրատարակու-թիւններ հազուադիւս են՝ ներկայս կրնայ իր կարեւոր տեղը ունենալ նաև դպրոցնե-րուն մէջ:

ՍՐԻՆՍ

ՎԱՐԱԳԱՅ ՅՈՒՆԵԱՆԸ

1857-1907

Խրիմեան Հայրիկի մտաւոր զարգաց-ման և գործունէութեան մէկ ապացոյցն եղաւ «Վարագայ Ժառանգաւորաց վար-ժարան»-ի հիմնարկութիւնը: Երիտասարդ վարդապետը 1856ին ձգեց Պոլիսը՝ իր գիմաց ապարէզ բանալով Հայրենիքը:

ուզեց նա հայ հոգուն վրայ, հայ ժողո-վուրդին մէջ աշխատիլ, կրթելով զանոնք գիտութեամբ և արհեստով, ապրուստի մտաւոր և նիւթական միջոցներով:




Խրիմեան Հայրիկ, հիմնադիր Վարագայ
Ժառանգաւորաց Վրթարանի

Խրիմեան Հայրիկ բահին ու բրիչին հետ իր ժողովրդեան մամուլն ու գիրքը ևս տարաւ, պատմական Վարագի վանքը ի-րեն կեդրոնատեղի ընտրեց. և հոն հաւա-քելով 1857ի գարնան 20-25 աշակերտ-ներ՝ հիմնեց «Ժառանգաւորաց վարժա-րան»ը, որ իր գիտութեան լոյսը պիտի սփռէր իր շուրջը հայ ժողովուրդին:

Այդ նորահաստատ Վարժարանը իր սկզբնաւորութեան հետ իր նպատակին ծառայեց, երևան հանելով կարող հոգեւո-րականներ, բանասէրներ, վաճառականներ, գրագէտներ՝ որոնք իրենց գործունէութեան ապացոյցը կու տային հեռաւորաց «Արծուի Վասպուրական» հանդէսը հրատարակելով. և այդ հաստատութիւնը տուաւ Սրուանձ տեանցներ, փրկալէմեաններ, Ճանիկեան-ներ և այլն:





Վարազյայ համայնականները արևելքի լուսամկարում



Վտմայ կամանց տարազը և ընտանեկան սեղան

*
* *

Վասպուրականի ժողովուրդը ուզեց
1907ին տօնել այդ Հաստատութեան Գո-
րելեանը. և արդէն Հիմնադիր Հայրիկը
Ապրիլի կոնդակով իր հաճութիւնն ու գո-

րեանները իրարմէ մեծապէս կը զանազա-
նին, առջինը դափնեպսակը կ'առնու եւ
րախտագէտ ժողովրդենէն՝ ի վարձ իր օգ-
տակար աշխատութեան. իսկ Հաստատու-
թիւնը՝ պէտք է ստանան մի և նոյն եւ
րախտապարտ ժողովրդենէն բոլոր այն նիւ-



Վարազայ վանքը

հունակութիւնը կը յայտնէ առ կարգադիր
Յանձնախումբն. բայց մահը Յիսնամեկին
հետ հասաւ՝ սգով պատեց ամբողջ ազգը,
և ի մասնաւորի Վասպուրական աշխար-
հը. ու այս տարի միայն, Սահմանադրա-
կան Օսմանեան հողին վրայ, շքեղօրէն կը
տօնուի այդ յետաձգուած Հանդէսը, Վեհ.
Իզմիրլեանի հովանաւորութեամբ:

Բովանդակ հայ մամուլը արձագանգեց
Հանդէսին կարգադիր Յանձնախումբին կո-
չին, և վայրկեան մը թողած օրուան
խնդիրները՝ հայ միտքը սլացաւ Վարա-
զայ բարձունքին վրայ հանդիսատես ըլլա-
լու կէս դար ապրող Հաստատութեան մը:
Անձնական և Հաստատութեանց յորեւ-

թական միջոցները՝ որով նա իր յառաջի-
կայ յիսնամեկին մէջ աւելի փայլուն, ա-
ւելի գործունեայ կեանք մ'ունենայ:

Պ. Տ. Զիթունիի կազմած «Վարազայ
Երեւելեան»ը, որ հրատարակուեցաւ կար-
գադիր Յանձնախումբին կողմէ, անշուշտ
պիտի կարենայ իստիլ բարեսիրտ ազգա-
նոց հետ. և որոնք չպիտի զլանան իրենց
նպաստն ընելու, վանայ մէջ Բարձրագոյն
կրթարան մ'ունենալու համար:

Հ. Մ. Պ.

